

ծունելութիւնը համապատասխանում է կեանքի աւելի բարձր աստիճանին — քաղաքային կուլտուրայի աստիճանին, որ ամեն տեղ աւելի յետոյ է զարգանում, քան զիւղականը:

Թաղ. Աւղալբեզեան.

1910 թ. ապրիլ.

Վաղարշապատ.

Պրոֆ. Մառի լեզուաբանական նոր դրոյթներ

Պրոֆ. Մառը՝ ոչ նշանաւոր տեղ ունի հայագիտութեան մէջ իւր բազմաթիւ բանասիրական և հնագիտական գործերով, ահա մի քանի տարի է քարոզում է մի նոր լեզուաբանական դրոյթիւն, որ յատկապէս հայերէնի համար խոշոր նշանակաւորն է և սպասւում է հիմնովին փոխել հայ լեզուաբանութեան արդի կերպարանքը:

Որպէսզի կարելի լինի բացատրել ընթերցողներին այս դրոյթեան էությունն ու նրա մեծ նշանակութիւնը, հարկ եմ համարում նախապէս տալ մի քանի ընդհանուր ծանօթութիւններ լեզուների ազգակցութեան և նոցա գիտական դասաստիճանութեան մասին:

Աշխարհիս վրայ սիւսուած են հազարաւոր լեզուներ. արտաքին երևոյթով այս բոլոր լեզուները իրարից անհախ ու անջատ են. ուսկայն լեզուաբանութիւնը խորասուզուելով նոցաներին քննութեան մէջ՝ գտել է, թէ այդ լեզուների մեծ մասը ընդհակառակը իրար հետ անձուկ կապակցութիւն ունին և ծագում են մի քանի ուսկաւածիւ հնագոյն (այժմ կորած) լեզուներից: Այդ կորած լեզուները՝ որոնցից խումբ խումբ նոր լեզուներ են ծագել, կոչւում են նախամայր. մի նախամայրից ծագած այլ և այլ հնագոյն լեզուները կոչւում են մայր. որոնցից յառաջացել են միւս նորագոյն լեզուները. իսկ մի նախամայր լեզուի, նրանից ծագած մայր լեզուների և նոցա յաջորդների ամբողջութիւնը կազմում է մի լեզուախումբ: Կարող ենք ասել՝ թէ իրաքանչիւր լեզուախումբ ամենահին նախապատմական ժամանակներում կազմել է մի ազգութիւն կամ մի ժողովուրդ և հետեւեալը նորն լեզուախումբին պատկանող բոլոր ազգերը նոյն հնագոյն ազգութեան կամ ժողովրդի բեկորները, նրանից

անջատուած և սեփական կեանք ստեղծած հատուածներն են:

Գիտութիւնը մինչև այժմ գտել և հաստատել է հետեւեալ լեզուախմբերը:

1. **Հնդեւրոպական լեզուախումբ**, որից ծագել են 8 մայր լեզուներ. սորա են՝ հնդկերէնը, հայերէնը, յունարէնը, լատիներէնը: Այս 8 մայր լեզուներից յառաջացել են հարիւրաւոր լեզուներ ու բարբառներ, որոնք բռնում են երկրագնդի մի շատ խոշոր տարածութիւնը՝ Հնդկաստանից մինչև Եւրոպայի ծայրը.— Հնդկաստան, Բելուճիստան, Հայաստան, Փոքր—Ասիա. Յունաստան, Բալկանեան թերակղզին, Աւստրիա, Սլաւնիա, Ֆրանսիա, Բելգիա. Հոլանդիա, Զուիցերիա, Դանիա, Գերմանիա, Ռուսաստան, Շուէտ—նորվեգիա և Անգլիա: Այս լեզուախումբն է որ օրից օր տարածուած է և գաղթելով միւս երկիրները՝ Ամերիկա, Ուիկիանիա, Ափրիկէ և Ասիա, սպառնում է կլանել մնացեալ լեզուախմբերը:

2. **Սեմական լեզուախումբ**, որի գլխաւոր սերունդներն են ասորեստաներէնը, բարբելացիներէնը, քաղդէարէնը, փիւնիկերէնը, ասորերէնը, եբրայեցերէնը, արաբերէնը, հաբէշերէնը: Այս լեզուախումբը բռնում է Միջագետքի, Ասորիքը և Միջերկրականի արևելեան ափերով տարածուած է մինչև Կարմեր ծով ու Աֆրիկէի հիւսիսային մասը:

3. **Գամկան լեզուախումբ**, որի գլխաւոր ներկայացուցիչներն են հին եգիպտացոց լեզուն, կարիւ, տամաշէկ սոմալի, գալլա ևն, որոնք բռնում են Ափրիկէի հիւսիսային մասը, եգիպտոս և Միջերկրականի հարաւային եզերքը:

4. **Բանտու լեզուախումբ**, որի ներկայացուցիչներն են զուլու, սվահիլի, հէրէրո և այլ բազմաթիւ լեզուներ, որոնք բռնում են ամբողջ հարաւային Ափրիկէն մինչև հասարակածից էլ այս կողմ:

5. **Ուրալ-ալթայական լեզուախումբ**, որի գլխաւոր սերունդներն են թուրքերէն թաթարերէն, մոնղոլերէն, թունգուզերէն, նողայերէն ևն, որոնք բռնում են Սիբիրական դաշտավայրը, հիւսիսային Ասիան, Ուրալ լեռներից մինչև Ալթայ:

6. **Ուգրո-ֆիննական լեզուախումբ**, որի գլխաւոր ներկայացուցիչներն են հունգարերէնն ու ֆիննիերէնը. երկրորդական լեզուներն են օստիակ, լիգուլ, գերիէն, չէրէմիս, մորզվին, լապոն, էսթոներէն ևն. որոնք բռնում են Սառուցեալ Ուիկիանոսից մինչև Եւրոպայի կեդրոնը:

7. **Աւստրական լեզուախումբ**, որի գլխաւոր ներկայացուցիչներն են մալայերէն, ճալայերէն, մալգաշերէն (Մադագասկարի

լեզուներ) և ուրիշ բազմաթիւ մանր մուներ լեզուներ, որոնք փոռւած են մի շատ ընդարձակ տարածութեան վրայ, Ասիայի հարաւային ծովափերից սկսած մինչև Մալայեան թերակղզին, Ուկրաինա, Խաղաղ ովկիանոսի կղզիները և Ափրիկէի ափում Մադագասկար կղզին:

Սոցանից դուրս կան ուրիշ շատ լեզուներ, ինչպէս ճապոնեւէն, չինարէն Կուիլասի, Ամերիկայի լեզուները ևն, որոնց վրայ գիտութիւնը դեռ իր վճիռը չէ տուած: Որովհետև գիտնականները առհասարակ հնդեւրոպական լեզուախմբին պատկանող անհատներ են եղել, ուստի ընտկան է, որ իրենց ուշադրութիւնը դարձնէին նախ և առաջ իրենց խօսած լեզուների վրայ: և ահա այս պատճառով լեզուաբանութեան մէջ ամէնից աւելի լուսարանուած մասը հնդեւրոպական լեզուախումբն է: Տասնեակներով պարբերական հրատարակութիւններ, բազմաթիւ մեծ և փոքր հատորներ՝ որ լոյս են տեսնում ամէն տարի, զբաղւում են հնդեւրոպական լեզուախմբի քննութեամբ: Եւ գիտութեան այս ճիւղը հասած է այնպիսի կատարելութեան, այնպիսի մանրակրկիտ աստիճանի, որ ոչ—մասնագէտ մարդու համար ուղղակի ծանձրալի է:

Երբ հնդեւրոպական լեզուաբանութիւնը հասաւ կատարելութեան, մանաւանդ երբ ուրիշ լեզուախմբերի պատկանող գիտնականներ ևս յառաջ եկան, այն ժամանակ միւս լեզուախմբերն էլ քննութեան առարկայ դառնալ սկսան: Ամսական լեզուախումբը՝ շնորհիւ իրեն պատկանող լեզուների չափազանց ակներև նմանութեան, շուտով ձևաւորուեցաւ: Հունդարացի և Ֆինլանդացի լեզուաբանների մեծագոյն օժանդակութեամբ կազմուեցաւ Աւգրօֆիննական լեզուախումբը: Աւերջին ժամանակներս մի խումբ լեզուաբաններ իրենց ուշադրութիւնը դարձրին Աֆրիկէի լեզուների վրայ և շնորհիւ այն հանգամանքի՝ որ Անգլիական, Ֆրանսիական և գերմանական գաղթականութիւնները օրից օր աւելի մեծանում էին Աֆրիկէի այդ անծանօթ վայրերում, յիշեալ անծանօթ լեզուներն էլ ծանօթացան գիտութեան և կազմուեցաւ Բանտու լեզուախումբը, արդէն քննուած ու ճշտուած: Meinhof կազմեց այս լեզուախմբի համեմատական քերականութիւնը: 1906 ին հայր Schmidt հաստատեց Աւստրական լեզուախումբը, որ նախապէս բաժանուած էր երկու տարբեր լեզուախմբերի՝ Աւստրալիական և Մալայո—պոլինէզեան անունով:

Հայերէնը պատկանելով հնդեւրոպական լեզուախմբին, շատ շուտով լեզուաբանների քննութեան առարկայ դարձաւ: Հնդեւ-

բոսպական լեզուաբանութեան հիմնադիրը Bopp, իւր համեմատական քերականութեան մէջ մտցրեց նաև մեր լեզուն: Նիւ լէր, Լագարդ, Տէրվիշեան շատ առաջ տարին նրա քննութիւնը. և երբ Հիւբշման հաստատեց, թէ հայերէնը հնդեւրոպական լեզուաբանութեան մայր լեզուներից մէկն է, այն ժամանակ նա դարձաւ լեզուաբանութեան անհրաժեշտ միջոցներից մէկը. և այսօր չկայ որ և է դիտուն լեզուաբան, որ պարտաւոր չզգայ իրեն դնէ մի քիչ ծանօթութիւն ձեռք բերելու հայերէնի գիտութեան մէջ: Ի՞նչ վիճակի մէջ են Կովկասեան լեզուները: Առաջինը որ դիտութիւնը որանով դեռ չէ զբաղուած: Առհասարակ ընդունուած կարծիքն այն է՝ որ Կովկասի լեզուները կազմում են երկու տարրեր խմբակցութիւն՝ հիւսիսային և հարաւային: Հիւսիսայինը՝ որ պարունակում է լէզիկ, չէչէն, ափխազ, սւախ, չէրքէզ և միւս մօտակայ լեզուները, շատ խախտ հիմք ունի. և կարելի չէ հաստատապէս ասել, թէ իրօք սրանք մէկ լեզուախումբ են կազմում: Իսկ հարաւայինը՝ որ պարունակում է վրացերէն, մինգրէլերէն, իմերէլերէն, թուշերէն, սվաներէն լեզուները, հաստատապէս կազմում է մի ամբողջութիւն, սրբահաւ յիշատակուած լեզուները միմեանց չափազանց մօտիկ նմանութիւն ունին, այնքան որ նոյն իսկ հասարակ ագէտ լազը նկատում է և դիտէ:

Այժմ անցնենք Մառի նոր վարդապետութեան:

Ի՞նչ է քարոզում Մառը:

Ամէնից առաջ Մառը քարոզում է, թէ հարաւային կովկասեան լեզուների ազգակից են Սեմական լեզուներին, Այս բանը ապացուցանելու և հաստատելու համար՝ Մառը պատրաստել է մի հոյակապ աշխատութիւն, որը սակայն դեռ տպագրուած չէ: Իւր գիւտը եւրոպական դրականութեան ծանօթացնելու համար պէտք էր, որ նա ամէնից առաջ հրատարակէր եւրոպական լեզուով մի համառօտ գեկուցում, որի մէջ յառաջ բերէր նոր վարդապետութեան ամէնից համադիշ ապացոյցները, համեմատելի բառերի ամէնից ակներե օրինակները: Այսպէս արաւ Brandstetter, հաստատելու համար մաւայօ—պոլինէզեան լեզուների ազգակցութիւնը: Բայց Մառը այս նախապատրաստական աշխատութիւնը զլացաւ դիտութեան: Հեղինակը բարեհաճել է սակայն մեր անձնական ծանօթութեան միջոցին բացատրել ինձ իւր գիւտի դադանիքները. ցոյց տալ զանազան օրինակներ, ապացուցանել մինչև իսկ թուական անունների ազգակցութիւնը, որ լեզուների համեմատութեան մէջ ամենից երևելի փոքրածաքարն է: Այս ապացոյցները բաւական էին համոզելու ինձ և

բաւական պիտի լինէին համոզելու նաև ուրիշներին, եթէ հեղինակը հրատակել յօժարէր նոյն նախապատրաստական աշխատութիւնը:

Եւրոպայի գիտութիւնների մէջ վաղուց կարծիք է յայտնուած, թէ Քամեան լեզուախումբն էլ ազգակից է Սեմական լեզուախմբին: Այս բանը թէև վճռականօրէն ընդունուած չէ դեռ, բայց շատ լեզուաբաններ ընդունում են: Մասն էլ է ընդունում: Այսպէսով ուրեմն երեքի տեղ կազմուած է մի նոր մեծ լեզուախումբ, որի անունը անյաջող բառով գնում է Մառք յարեքական լեզուախումբ, և որի ներկայացուցիչներն են Հարաւային Կովկասեան, Սեմական և Քամեան լեզուները: Այս լեզուախումբը տարածուած է Հարաւային Կովկասից մինչև Հիւսիսային Ափրիկէ:

Այս բոլորը սակայն պատկանում են օտար լեզուներին և հայերէնի մասին դեռ խնդիր չկայ:

Բայց Մառք մտածում է. եթէ Կովկասը՝ որ Հայաստանի հիւսիսային կողմն է, պատկանում է յարեթական լեզուախմբին, և Միջագետքը՝ որ Հայաստանի հարաւային կողմն է, պատկանում է նոյնպէս յարեթական լեզուախմբին, կարող չէ լինել որ այդ երկուսի միջին մասը, այսինքն Հայաստանը, չպատկանի նոյնպէս յարեթական լեզուախմբին, հակառակ պարագային՝ յարեթական լեզուախմբի գրաւած հողը մի ամբողջ շերտով կտրուած, անջատուած պիտի լինէր, ինչ որ անբնական է:

Թէև ճիշտ նոյն պատճառաբանութեամբ կարելի է ասել թէ— որովհետև Պարսկաստանը՝ որ Հայաստանի արևելքն է, պատկանում է Հնդեւրոպական լեզուախմբին, և լիւր՝—Սիան՝ որ Հայաստանի արևմուտքն է, պատկանում է նոյնպէս Հնդեւրոպական լեզուախմբին, հետևաբար կարող չէ լինել, որ նոցա միջին մասը՝ այն է Հայաստանը, չպատկանի նոյնպէս հնդեւրոպական լեզուախմբին.—սակայն որովհետև գիտութիւնը ցոյց է տալիս արդէն, թէ հայերը արևմուտքից են գաղթել Հայաստան, իսկ Հայաստանը նախապէս եղել է խալդեանների երկիրը, ուստի ընդունում ենք, թէ յիշեալ Խալդեացիները պահպանելու են եղել յարեթական լեզուախմբին:

Այսպէս կարծել էին արդէն ոմանք և մտածել էին Հայաստանի բնեւագրերի լեզուն համեմատել վրացերէնի կամ օտարերէնի հետ: Մառք նոյն եզրակացութեան հասնում է այլ ճանապարհով:

Այս էր ուրեմն Մառքի կարծիքը մինչև դեռ 10-ամարի ա-

ռաջ, երբ իմ անձնական ծանօթութեան ժամանակ պատիւ էի ունեցել լսել իր բացատրութիւնները:

Այժմ Մառը հետեւում է և երրորդ ծանրակշիւ հարցի: Այս հարցը դժբախտաբար պարզ, ակներև կերպով մէջ տեղ չբռնած չէ, բայց իր հրատարակած մի քանի տետրակներէ, նրանց մէջ դուրս ածած բացատրութիւններէ և հնդկերոպագէտներէ երեսին ուղղած խէթ ակնարկներէ երևում է, թէ նա յիշուապէս ասում է՝

Հայերէնը հնդեւրոպական լեզու չէ. այլ նա նոյն այն խալդեան յարերական լեզուն է, որ յետոյ հնդեւրոպացիների լեզուին հետ Եփուսիով՝ ստացաւ նորանից նոր բարբեր և մի կերպ հնդեւրոպականացաւ:

Հայերէնի համար մինչև այժմ եղած լեզուաբանական քննութիւնները պարզում էին մեզ հետեւեալ պատկերը. մեր լեզուն ունի 6500՝ արմատ. ոտցանից 300 ը ընկէ է, այս նքն պատկանում է հնդկերոպական լեզուախմբին. յետոյ կան 750 իրանեան, 140 ասորական, 550 յունական, 100 արաբական 40 թուրքական և 50 ֆրանսիական փոխառութիւններ, որոնք լեզուի ընկէ տարրերը չեն կաղմում. մնացեալ 4570 բառերը դեռ մնում են առանց մեկնութեան (տես Արարատ, 1902. էջ 67): Հայերէնի մէջ կան և 900 բառեր, որոնք նոյն են Կովկասեան լեզուների հետ. (այս բառերի քննութիւնը տուել եմ Արարատ, 1898, 309—315 և 365—371) և որոնց համար առհասարակ ընդունուած կարծիքը այն է, թէ հայերէնից անցել են վրացերէնին և միւս Կովկասեան լեզուներին:

Մառի նոր վարդապետութեամբ ամբողջ այս պատկերը շրջում է. Կովկասեան լեզուների 900 փոխառութիւնները և 140 ասորական փոխառութիւնները այլ ևս փոխառութիւն չպիտի համարուին, այլ հայերէնի ընկէ յարեթական տարրերն են, վրացերէնին ու սեմական լեզուներին ցեղակից. իսկ 300 Հնդկերոպական բառերը փոխառութիւն են արշաուղ եկւոր Հնդկերոպացիներից, ինչպիսի դուռ փոխառութիւններ են միւս իրանեան, յայն, արաբ, թուրք և ֆրանսիական բառերը:

Լեզուաբանութեան հարիւրամեայ աշխատանքով կառուցուած այս շէնքը տապալելու համար ինչ ապացոյց ունի Մառը. —24 ստուգաբանութիւն, որ հրատարակուած են 3 յօդուածների մէջ. Афетическое происхождение арм. слова մարգարէ, Къ вопросу о ближайшемъ сродствѣ арм. языка съ иверскимъ, Афетическій к въ арм. языкѣ.

Առաջինում քննում է մարգարէ, պերճ և պայծառ բառերը.

ոոցա յաբեթական արմատն է բրկ «իայլիլ»։ համեմատելի ձևերն են արաբ. աոոր երբ. բրկ «իայլիլ»։ աոոր—արաբ. բարկա «հայ-ծակ» երբ. բարակ «հայծակ»։ վրաց. բրկիալի, բրձղիալի, պրկիալի «իայլ»։ բրձղիմա «իայլեց», պեծի «հայծ, պէծ», վարսիս, մարսիս «աստղ», մեխի «հայծակ», մեղի «ակնթարթ», լազ. մաւրանցիսի «աստղ», ենթադրեալ հայ. մարզ «աստղ», որից էլ վրաց մեմարգե «աստղագէտ, կախարդ»։

Երկրորդ յօդուածում քննում է կես, կոյս (կոզմ), կործանեմ. ձանձ, ցօղ և լակոս բառերը։ Կէս վրաց. կերձոյ բառն է, որ նշանակում է «կող, կողմ», երբեմն նաև «կէս»։ կերձ դարձած է կերծ—կերս—կեյս—կէս. նոյն բառն է կոյս (հնապէս կորս) «կողմ»։ կորս-ի տեղ դնելով կործ. կո՛ւնենանք կործանեմ, իբր թէ «կողքին խփել»։ սրա հետ հմմտ. վրաց. գուերդի «կող, կողմ», լազ. գուէր, գուէրդի «կէս», վրաց. մոզվերդի «կողքին դարնել»։—ձանձ նոյն է վրաց. ցերի, լազ. չաչի, մձաչի, մինգրէլ. ձանչի, ձանդի հոմանիշներն հետ։—Յօղ=վրաց ցվարի. մինգրէլ. ցուցչի, ցունդի։—Լակոս=լազ. լակի «շուն», վրաց. լեկվի «շնիկ»։

Երրորդ յօդուածում քննում բառերը հետեւեալներն են.

1. Կական=վրաց. դադանի «աղմուկ, ճիւղ»։

2. Կանաչ և կանալիս. վերջինը նախապէս պէտք է նշանակէր «արօտ, դարնանային»։—վրաց. դանա և լազ. դանա, օնա «արօտ, մարդ»։

3. Կակօրդ և կիրձ. հմմտ. վրաց. դօրդա դ'օրդի «կսկորդ», դարդանա «որկոր», գուրիա և իմերէլ. խարխա, լազ. դիրդինսի, վրաց. դրոնձի «կօկորդ»։ բոլորն յաբեթական արմատն է դրձ։

4. Կօրի ջջրն անցք», նախապէս նշանակելու էր «ջուր»։—վրաց. ծղարս «աղբիւր», ծղալի «ջուր», մինգրէլ. ծղարի. լազ. ծկարի «ջուր»։

5. Կօյր. տուբարկ. յվեր «կոյր», մինգրէլ. դենյվիր «կուլանալ»։ թէև հայ բառը համարուում է պարսկերէնից փոխառեալ, բայց Մառի կարծիքով պարսիկ լեզուի մէջ դեռ ուրիշ շատ բառեր կան, որ յաբեթական ծագում ունին։

6. Կիրք, կրքիլ.—վրաց. ծաւրա «կրթուիլ», ծաւրնա «կրթութիւլ»։ բոլորն էլ յաբեթական ծր արմատից։

7. Կէս. հնապէս. կերս=վրաց. ծերսա «ծակեց», ծերօիլի «կէտ», ծրօիլի «խթան»։

8. Կար, կարիլ, կարել. յաբեթական արմատը դր, դվր. ք գառնալով դ, յետոյ լ՝ կալլ-ակ. հմմտ. վրաց. ծվերի «կաթիլ»։ ծրալա «կայլակում»։ տուբարկանեան ճիւղում պէտք էր. սպասել ձիւրի=ձիւր, որից փոխառեալ է հայ. օլիւր։

8. bis. ծայր—վրաց. ծվերի «ծայր, գագաթ»:

9. Ածծի, կծեծ, գծուծ, գծուծ.—վրաց. դուցծի, ձուցծի «ժլատ»:

10. Էլինձ կլինձ.—վրաց. դորի, լաղ դեչի, մինգր. դեչի «խուղ» սովայն կլինձ ըստ Մառի փոխառութիւն է, իսկ յարեթական ընկի բառ է խոչ, որից փոխ են առել և ուրիշ մի քանի հնդեւրոպական լեզուներ:

11. Կերպ «ձե», նախապէս պիտի նշանակէր «կուռք», որի հետ ցեղակից է վրաց դմերքի, ովան. դերքեր, լաղ. դարմարի, մինգրէլ. դորոնքի «Աստուած»:

Ահա սրանք են Մառի հրատարակած ստուգաբանութիւնները: Մառի կարծիքով սօքա շատ պարզ, ակներև կերպով ճիշտ ստուգաբանութիւններ են. բայց մենք, որ դժբախտաբար բառերի ստուգաբանութեան մէջ ամենից առաջ փնտռում ենք օրէնք և ո՛չ ազատութիւն, շատ կասկածելի եւք գտնում նոյն ստուգաբանութիւնները: Պերձ բառի իմաստը «պայծառ, լուսաւոր» չէ, այլ «չքեղ, փառաւոր». պայծառ բառի առ վանկը մասնիկ համարելու համար մի քանի ապահով օրինակներ ենք պահանջում. կական բնածայն բառ է և հետեւեալ վրաց. դադանի բառի համեմատութիւնը պատահական է. նոյն և աւելի իրաւունքով կարող էինք համեմատել վրաց. կականի, կականերա «գորտի կռկռոցը, հաւի կրթալը», օրակիկիներա (օրավիկիկիներ) «մէկ անգամ մայել». բայց սրանք էլ նոյնպէս պատահական են: Միւս օրինակները իրար են հակասում. եթէ վրաց. ծերա—հայ. կէս, ուստի վրաց. ծուրա ձեն էլ պիտի լինէր հայ. գոնէ կիթ և ոչ թէ կերթ. եթէ վրաց. ծվերի—հայ. ծայր, ուստի ծվերի—ծայր պիտի լինէր և ոչ թէ կար. կարի բառը ո՛չ թէ «ջուր» հիմնական գաղափարից է բխում, այլ ըստ մեզ «անցք, անցք, փոս, ճանապարհ» գաղափարից. և ինչո՞ւ չհամեմատել հայ. ջուր—վրաց. ծղալի, մինգրէլ. ծղարի, լաղ. ծկարի «ջուր», քանի որ հայերէնը ըստ Մառի աւելի անձուկ նմանութիւն ունի լաղերէնի ու մինգրէլերէնի, քան թէ վրացերէնի հետ: Նոյն պատճառաբանութեամբ բացարձակօրէն անստոյգ ենք համարում ցօղ բառը. մինգրէլ. ցունչի, ցունդի պահանջում են որ հայ. ցօղ բառի տեղ ունենայինք ցունձ, եթէ վրացերէնի վ. ձայնը պէտք է կորչի հայերէնի մէջ (ինչ. ծվերի—ծայր, ծվերի—կար), ապա ինչ գործ ունի ցվարի—ցաղ բառի մէջ: Կանաչ, կանուխ բառերի մէջ աչ և ուխ մասնիկ համարելու համար՝ պահանջում ենք նոյնպէս ապահով օրինակներ: Նստ թոյլ է կերպ բառի համեմատութիւնը. ո՛չ մի կրօն

չի կոչել իր Աստուծուն «պատկեր, ձև արձան», այլ կանուանէ նրան «Ասյո (Իէվա), գովելի (Ալլահ), Տէր (Ադուխա, խուդա), էութիւն (Որ էն) ևն», իսկ «արձան, պատկեր, ձև» արհամարհական բառեր են, որ մի սուրբ հրօն կարող է տալ մի հեթանոս հրօնի շառաւուռներին:

Մառի ստուգաբանութեանց մէջ կան սակայն մի քանի լաւ համեմատութիւններ. սորա են մարգարէ, ձանձ, լակոս, ծայր. ուղիղէ նոյնպէս այն կարծիքը, որ պաշտպանում է Մառը իր երկրորդ յօդուածում, թէ հայերէնը աւելի մօտիկ է լազերէն ու մինգրէլերէն լեզուներին, քան վրացերէնին^{*}): Սակայն ընդունենք մի քովէ, որ յիշեալ բոլոր 24 ստուգաբանութիւններն էլ ուղիղ, ճիշտ, ընդունելի են ինչ գուրս կը դայ սրանից: Ոչինչ: Ոչինչ չէր գուրս դայ նաև եթէ 24-ի տեղ 240, 2400 ստուգաբանութիւններ գտնուէին: Ներկայ հայ լեզուի մէջ 4000-ի չափ թուրքերէն բառ կայ, բայց հայերէնը թուրքերէնի ցեղակիցը չէ. Նոր-Նախիջևանի բառբառում 10 թուրք կամ ռուս բառի դէմ 2 հայ բառ կը նկնի՝ արդեօք, բայց Նոր-Նախիջևանի բառբառը հայերէն է: Բառերը չեն միայն, որ շինում են լեզուն. քերականութիւն է պէտք: Հայերէնը հնդեւրոպական չէ՝ նրահամար, որ 3—400 հնդեւրոպական բառեր ունի, այլ հնդեւրոպական է նրահամար, որ իր քերականութիւնը հնդեւրոպական է. որ գործիականի մասնիկը—ով,—իւ,—բ, բայական վերջաւորութիւնները—իմ,—ես,—է,—իմք,—էք,—են, դերանունները ես, մեք, իմ, դուք, նա, թուականները մի, երկու, երեք, չորս, հինգ, վեց, տասն, տասն, բազմ ևն ևն հնդեւրոպական են: Գիտութեան մէջ հաստատուած, հոգի ու մարմին դարձած այս հսկայ գաղափարը, հայերէնի հնդեւրոպական լինելը հերքելու համար պէտք է, որ ապացուցուի թէ սրանք հնդեւրոպական չեն, թէ հայերէն քերականութիւնը յարեթական է: Այնուհետև միայն պիտի մէջ բերուին զանազան ստուգաբանութիւններ, որոնք ճիմնուած պէտք է լինեն հաստատուն, անխախտ օրէնքների վրայ, ինչպէս է հնդեւրոպական լեզուաբանութեան մէջ: Բանի այս բանը կա-

^{*}) Սակայն սորա էլ նորութիւն չէին: Եւ այն քաղի համեմատութիւնը արդէն արեւ է M. Rjabinin. MSL 40. 21 ծայր քաղի մասին տես Արարատ 1898. էջ 542 ա. հայերէնի աւելի մերձաւոր խնամութիւնը լազերէնի հետ՝ տես Բանասէր 1906. էջ 406. բոլորովին նոր չը գտնենք մարդարէ եւ լակոս, որոնք ըստ մեզ զուտ փոխառութիւն են կովկասեան լեզուներից. Նկատելի հանգամանք է եւ այն, որ Մառը պաշտպանելով յարեթական գաղափարը, առաջին երեք բառերի ստուգաբանութեան մէջ միայն զիմում է սեմական համադօրների համեմատութեան, իսկ միւս 21 բառերի ժամանակ խաբու անտես է անում սեմականները:

տարուած չէ, մենք այսպիսի ստուգաբանութիւնները կընդունենք իբր պատահական նմանութիւններ, իոյ երբ նորա աչք ծակելու չափ ակներև են, ինչպէս ձանձ, մարգարէ, լակոս, (աւելացնեմ փոցխ, ոչխար, բոգ ձկոյր, հոռի, սահմի, ևն ևն), այն ժամանակ կը համարենք նրանց իբրև հասարակ փոխառութիւններ կամ Կովկասեան ազգերից և կամ խաղերից, որոնց հետ հայերը դարեր շարունակ հարեան ու բնակակից են եղել: Եւ շատ դարմանալի կը լինէր, եթէ դարերի այս կենսակցութիւնը փոխադարձ ազդեցութիւն չունենար. եթէ վրացիք և միւս Կովկասեան լեզուները օգտուել են մեզանից լեզուով, գրականութեամբ և կրօնով, մենք էլ անշուշտ փոխադարձաբար օգտուած պէտք է լինենք նոցանից զանազան փոխառութիւններով: Հայերէնը 4570 անժանօթ բառ ունի դեռ. Կովկասագէտներին կըմնայ որոշել և ստուգել, թէ սոցանից ինչքանը փոխառութիւն է յիշեալ լեզուներից: Եւ անհունապէս շնորհակալ կըլինէիք Պրօֆ. Մառին, եթէ հրատարակելով իւր վրացական ու սեմական լեզուների համեմատական բառարանը, նպաստէր գիտութեան և մասնաւորապէս հայ լեզուաբանութեան այս մասի լուսաբանութեանը:

28 ապրիլի 1910 թ.

Հ. Աճառեան



IV

ՁԵՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՍԿԶԲՈՒՆՔ¹⁾.

(Կարեւորութիւնը, էութիւնը, նպատակը):

Տեսանելի և շօշափելի առարկայի կատարեալ բմբռնումը յաճախ կախուած է նրա ձևի և ձևային յարաբերութեանց ներհայեցումից (Einsicht).

Ձևերի գիտողութեան միջոցին մեր ուշադրութիւնը պէտք է ուղղուած լինի ոչ թէ միայն այն բանի վրայ, թէ ինչո՞ւ այս մարմինը կամ նրա որ և է մասը այս ինչ ձևն ունի, այլ և ինչո՞ւ նա այդպիսի ձև (կերպարանք) պէտք է ունենայ:

Դասուանդութեան նկարագրական (գեսկրիպտիւ) եղանակը, որով առաջները բաւականանում էին, պատճառական մտածողութեան զարգացման համար անարդասիք է: Վիտողու-

1) Pickel, Die Geometrie der Volksschule, 1872.